



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 17

Տ Ե Մ Ա Ր Թ Ք

23 ԱՊՐԻԼ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՍԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՄ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղալ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրչին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ Զենիթը՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — Զենիթ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հասր 40 փարս

ԱՐՏՈՂԱՏԷՐ — ԱՐԲԷՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

(کتبخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապր-Ալի Զասսէսի քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց Հակոն կէտն է լաւ մեքենայ մը ունենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անխիւս և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անխիւս զոգոնութեանց և սաղաւկի ազդիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԵՐԷ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, սեփ ու սեփ եւ ձեռքի
միանգամայն անհետնեւ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է, ոոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատուածը և գիւրագործելին ըլլալուն բոլորողակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց:

ՆԱԿԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎԱՅՈՐԹՆԵՆ

ԲԵՐՍ

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 և 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱՆԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէջ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համալ .
- (2. Սուլթան Պէյադիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13.

ՍԻՆԿԵՐ

Չարչը Պոյու, թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեռն գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւղզուլուի տունը:

ՅԵՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ


ԿԱՅԾ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանֆ



ՀԻՊԵՂԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Քրանֆ

- ՅԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
- ՅԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:
- ՅԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շողեհաւի՝ եւ առաքատանաւի վրայ:

Ընկերութեան գրամատուեն է ՔԻԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառն պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիւազօր Գերկայացուցիչ
Գ. ՅԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/Ն 17

ՇԱԲԱԹ

23 Ապրիլ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վճարեալ քե Զրի. (հմբագրական). — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Վերյուսումբե . (Ոսանաւոր). — ՍՄԲԱՏ ՕԳԳԱՅԵԱՆ : Որովայնախօսութիւն (Թարգմ.) — ՆԵՐՍԷՍ ԶԱՔԱՐԵԱՆ : Փափաք (Ոսանաւոր). — Ս. ԽԱՉՈՒՆԻ : Կերածս (Ֆանքեզի). — ՄԱՐԿՈՒԹ : Զաւսիկ . . . ձու յողուած (Շար. եւ վերջ). — ԼԻԼԱ : Դիւքանք (Ոսանաւոր). — ԱՐ. ՇԱԿ ՍՊԷՉԵՐԵԱՆ : Իճչ կ'անցնի կը դայնայ . — Ս. ԽՈՐԷՆ : Լուրերու բաժին : 10,000 Տարի Սառնակոյսի մը մէջ . (Հանրագիտակի քերթօնք) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ՎՃԱՐԵԱԼ ԹԷ ԶՐԻ

Վերջին մէկ քանի շաբաթներուն մէջ , գրական եւ լրագրական հրապարակին վրայ կարծես նիւթերը խնդիրները զիրար կը հալածեն : Այս կարգէն էր նաեւ մեր յարգելի պաշտօնակցին Մասիսի մէկ տրտունջը , վճարեալ յողուածներու եւ կամ յողուածագիրներու մասին :

Մասիսի փորձ խմբագիրը Տ. Ա. կը գանգատի այն բոլոր նորերու յողուածագիրներուն դէմ , որոնք վերջերս յայտարարած են թէ՛ contre connaissance միայն պիտի կրնան աշխատակցիլ , եւ հակառակ պարագային պիտի դադրին զայր գարեւէ այդ գրական թերթին էջերը :

Եւ ահա այս էական կէտը խնդիր կ'ըլլայ բերնէ բերան եւ մինչեւ իսկ խմբագրականի նիւթ :

Այս էական եւ կարեւոր խնդիրը թէեւ մենէ հեռու կը ձեռնուի , սակայն լրագրական փափուկ ասպարէզին հետ սերտ առնչութիւն ունենալուն , կուզենք մենք ալ մեր կարծիքը յայտնել այս մասին , թէ՛ յողուածագիր մը պէ՞տք է վճարուի կամ ոչ :

Ձի թուելով այսօր հրապարակը լեցնող կարգ մը դպրոցահոտ գրչակները, պարծենօք պէտք է յիշել այն ընտրեալ գրիչները, որոնց գրութեանքները ախորժով կը կարգացունին և որոնք տարիներու ընթացքին մէջ անուն մը չինած, և իրենց ստորագրութիւնը ճանչցուցած են դրական հրապարակին վրայ:

Այս գրիչները թէև փափկանկատ քիչ արտագրելու մէջ, սակայն ամէն անգամ որ դիմում կամ խնդրանք մը ըլլայ իրենց, լրջօրէն կը փութան հասցնել իրենց յօդուածները անխտիր և առանց նիւթական փոխարինութեան կամ ակրնկալութեան:

Այսօր բոլոր հայ մամուլը կուգէ, կը փափաքի օգտուիլ այդ համբաւած գրիչներէն, որոնք ցաւալի է ըսել թէ տակաւ կը քաշուին լրագրութենէն, զըզուելով նորերու խեղդուկ ողողումէն: Եւ իրաւունք ալ ունին, փրկելու համար ձեռք ձգած համբաւին որ անշուշտ շատ սուղի նստած է իրենց:

Մասինս յարգելի խմբագիրը կը գանգատի ամէն անոնց դէմ, որոնք զլամական փոխարինութիւն մը կը պահանջեն աշխատակցելու համար, ոչ թէ նիւթական օժանդակութիւն մը նպաստ մը իւրացնելու տենչով, այլ եթէ չեմ սխալիր par caprice:

Ես իմ մասին պիտի ուզէի որ թերթիս բոլոր էջերը վճարեալ յօդուածներ զարդարէին, տուժէի նիւթապէս, բարոյապէս կրկին վարձատրուելու համար:

Թէ ի՞նչ նուրբ գաղտնիքներ կան վճարեալ յօդուածին և ձրիին մէջ, պարզենք:

Վճարեալ յօդուածագիրը երբ գրութիւն մը ներկայացնէ խմբագրին, տնոր մէջ քմահաճոյքը, անձնականութիւնը, և հաշուեյարդարութիւնը մաս չպիտի կրնան ունենալ, քանի որ իբրեւ գնուած, խիստ քննութենէ մը պիտի անցնի ան, հակառակ պարագային ետ դարձուելու պայմանաւ:

Մինչդեռ երբ ձրի ըլլայ, խմբագիրը լեզու բերան չպիտի ունենար ո՛ր և է դիտողութիւն ընել գրութեան, ճաշակին և նիւթին վրայօք, և ի հարկէ ստիպեալ, իբր *remplissage* պիտի թխմէր իր թերթին մէկ էջին մէջ, *merci* ներու տարափ մը շուայելով այդ *capricieux* յօդուածին նկատմամբ:

Վճարեալ յօդուած մը, ըստ իս, աւելի ժողովուրդին և հանրութեան օգուտը պիտի չօշափէ, որովհետեւ անիկայ չեզոք և ընդհանուր գիծերու վրայ շարադրուած պիտի ըլլայ անվրէպ, մինչդեռ ձրի յօդուած մը, որ անսպասաւոր ստորագրողին մէկ հաշիւը մաքրելու կոչումը ունի, պիտի օգտակար ըլլայ անոր, որուն ուղղուած է լռելեայն և անզգալաբար, և ուրկէ ժողովուրդը ոչինչ պիտի կրնայ քաղել իրեն համար:

Վճարեալ յօդուած մը թերթին պատիւ է միշտ, որովհետեւ մարդ արժէքին համեմատ կը վճարէ, և քցըբռիկ գրութիւններ ի բաց կը թողուին միշտ: Վճարեալ յօդուածը խնամատ կ'ըլլայ, աշխատութեամբ շարահիստուած և մտածումով արտադրուած, մինչդեռ ձրի գրութիւն մը ափ ափոյ միտուած ըլլալուն թերթին վարկը իջեցնելէն ուրիշ օգուտ մը չունենար:

Մենք մեր հինգ տարուան պզտիկ փորձառութեամբ կրնանք հաստատել այսօր թէ՛ թերթ մը, ըլլայ պարբերական ըլլայ օրական, ո՛րչափ վճարեալ յօդ-

ուածագիրներ ունենայ, այնքան կաւելցընէ իր ընթերցողներուն թիւը, սա բարձակ ճշմարտութեամբ թէ՛ վճարուած յօդուածներն են որոնք կը փնտռուին, քանի որ խնամոտ կ'ըլլան անոնք և ընթերցման արժանի:

Որչափ կարելի է, պէտք է աշխատիլ վանելու ձրի և ինքնակոչ գրչակները մեր թերթերէն, աւելի ուժ տալ ծանօթ գրիչներու, և չի զլանալ անոնց հարկ եղած վճարումը: Արդիւնքը միշտ մեր կողմը պիտի ըլլայ, վստահ եմ:

Եւ պէտք է զիտնալ որ այս զոհողութիւնը ահագին գրամագլուխի մը կարօտ չէ բնաւ: Այս գործին մէջ է՛ն մեծ գրամագլուխը սկզբունքն է, անգամ մը որոշելը ապագային յաջողութեան բանալին կրնայ համարուիլ:

Վճարեալ յօդուածներ պէտք են մեզ, ինչպէս նաև ընթերցողին համար, փոխանակ ձրի ֆանթեզիներու, որոնց գլուխը անպատճառ գրուած կ'ըլլայ. «Առ Օր. Ս. Հ. և կամ «սիրելի բարեկամիս» և ըն: Պէտք է ընդունիլ սա ճշմարտութիւնը թէ՛ օրուան թերթերը անոր ասոր քարէ տախտակները չեն, որոնց վրայ ուղածնին գրեն, յետոյ աւերելու համար:

Պէտք է նախ վճարել և ապա վճարուիլ:

Ահա իմ կարծիքս:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՎԵՐՅՈՒՇՈՒՄՆԵՐ

Նրսեմասուներ խոր բաւուսին ծոցին մէջ՝
Վայրկեաններ կան լին յուերու եւ ցաւի,
Ջեփիւնին հետ սուլումին շոյանին մէջ
Սրիս վերք հարուածէ մը կարիւնի:

Վայրկեաններ կան վեհ յուերու եւ ցաւի,
Լուսեան այս հասնումին սեւ գրկին մէջ
Կը յիշեմ միշտ այն օրերը հեռալի
Յորում նսած կը դիտէի երկին պերն:

Լուսեան այս հասնումին սեւ գրկին մէջ՝
«Ամբողջ տղայ դեռ տարիքով ու մեքով»
Նսած «այնտեղ» անբռնաբա հիւսիսի
Նրջանկութեան բոյրերուն մէջ հետեանով:

«Ամբողջ տղայ դեռ տարիքով ու մեքով»
Յոյսերուս մէջ միշտ երազուն անգգայ
Կը դիտէի կեանքի դրուագն հանդիմով:
Յոյսերուս մէջ միշտ երազուն անգգայ,

Գլուխս հսկած, անբռնաբա մէջ թաղուած,
Հրմայութեայ՝ տառ յուզութեայ, բայց հիմայ
Հին օրերու հին յուերէն դալկացայ:
«Գոնէ կեանք տուր տեղում սրիս ով Ած.»:

Բայց, սահեցան, զերդ մի ասուպ երկնին
Տղայ էի դեռ տարիքով ու մեքով
Բայց յուերս անշափահաս տարիքին
Կը յարձակին սրիս մէջը հանդիմով:

Այն յուերը անշափահաս տարիքիս
Սարսուռ կազդեն երազներու տարփաւէս,
Այն ասեմը կը ծնէի սիրելիս
Բայց հիմա ալ կը բաժնուիս «առ յաւէս»:

ՍՄԲԱՏ ՕԳԻԱՆԵԱՆ

ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Որովայնախօսութեան արուեստը՝ որովայնէն տեսակ մը ձայն դուրս տալն է, և ասիկայ նոր արուեստ մը չ'է, վասն զի Պըշտուն իրեն ժամանակակից որովայնախօսի մը՝ «էօութէզ» ի անունը կը յիշէ, որ նոյն իսկ հին տարեգրաց մէջ անուանի տեղ մը գրաւած է:

Նախնեաց համար, որովայնախօսները՝ գուշակներ, ներշնչեալներ ըլլալով, անոնցմէ ծագում կ'առնէին պատգամախօսները: Թերեւս, որովայնախօսութիւնը՝ «Սիպիլ» ներու և «Պիթոնիս» ներու (գուշակուհի) սըրբազան աստուածադիցութեան մէջ իր կարեւոր մասն ունէր: Նախկին ժամանակաց քրիստոնեաները՝ այս մասին չատ դիւրահաւատ գտնուեցան, անոնք կը կարծէին թէ՛ որովայնախօսները մարգարէական ոգիով ներշնչեալ բնածիր մարդիկն են, և այդ պատճառաւ զանոնք կ'ուշակդէին. կամ սատանայէն դիւահար դժբաղդներ և չարարար ու չաղակրատ ոգիներով այցելուներ էին:

Սօսելու այս եղանակաւորումը կամ փոփոխութիւնը՝ որովայնին խորշին մէջ բառերու յօդումով խօսք մը կազմելն է. և այդ յօդուած բառերը զանազան հնչիւններ ունենալով հեռաւոր վայրէ մը եկած ձայներու նման հեղձուցիկ կ'ըլլան: Որովայնախօսները՝ գոց բերնով, անշարժ շրթներով ձայներնին դուրս կուտան միշտ՝ խօսք մը կազմելու համար ըրած բոլոր շարժումներն աննշմարելի թողլով:

Վերջին դարերու մէջ նշանաւոր հանդիսացած որովայնախօսներէն նախ յիշենք, Պապան Թաւմուս Ա. ի սենեկապանը, Պապան Թագօրի, տը Հառլիմ, 1650 թուականին. յետոյ, Սեմ-ժիլ՝ Սեմ-ժեմաման-չէյի մէջ նպարավաճառ 1765 թուականին. և, վերջապէս Շառլը-Գօնթ՝ տասնեկիններորդ դարու սկիզբը Բարիզու մէջ զաւեշտախաղերու ցուցարար մը, որ նոյն իսկ Թեաթրը Գօնթ անուամբ թատրոն մ'ունենալով շատ ընդունելութիւն գտած է:

Շառլը Գօնթ՝ ժողովուրդին քրեմ բռնելու համար ինքնիրեն կ'գրօսուէր: Օր մը

գիւղի մը եկեղեցին կ'այցելէ տեղւոյն ժողովրդապետին և քանի մը մեծամեծաց նետ. յանկարծ օգնութեան կանչող ձայն մը լսելի կ'ըլլայ, որուն՝ սալաքարերուն տակէն գալը կը կարծուի, և արդէն ստուգիւ հոն գերեմանաքար մը կար:

Ժողովրդապետը զարհուրած, փոսահատ մը կանչել տալով քարին անմիջապէս վերցուլը կը հրամայէ, սակայն քաջ մարդուն գործի սկսած վայրկեանին, դարձեալ տագնապալից ձայնը կ'լսուի, այս անգամ աւանդատան կողմէն: Դէպ ի հոն կը վազեն և կարծելով թէ անպատճառ խելճ դժբաղդը անկից յարութիւն պիտի առնէ, փոսահատը կ'սկսի ուժգնօրէն սալաքարերը հարուածել և զանոնք հանելուն պէս աւելի հեղձուցիչ ձայներ եկեղեցւոյն կողմէն լսելի կ'ըլլան:

Ամբողջ ներկայները շփոթալի տագնապով մը առաջին վայրը կը վերադառնան: Ժողովրդապետին սարսափը ա'լ գէնիթը հասած էր:

Գօնթ՝ իր քահանայը չ'իրնալով զսպել ինքզինքը կը մատնէ, որով աւելի գէշ վիճակի մը պատճառ ըլլալէ կը դադրի:

X

Մեզի աւելի մերձակայ ժամանակներուն՝ Պապանի հին ճաշարանին մէջ տեղի ունեցած ահա՝ մէկ տեսարանը, որուն՝ քանի մը յաճախորդներ ակնատես եղած են:

Պարոն մը՝ շուշի մը ընկերակցութեամբ ճաշարան կը մտնէ ու իրեն սեղան մը ընտրելով հոն կը գետեղուի, և իր քովը թոռի մը վրայ ալ շուշի կը նստեցունէ:

Սպասաւորը կը մօտենայ:

— Նախ՝ ինծի երկու հատ խաչած հաւ կիթ բեր, կ'ըսէ պարոնը:

— Ինծի ալ՝ կ'ըսէ շուշի:

Սպասաւորը՝ ապշած, ակնջներուն լսածին չ'ուզելով հաւատալ, աչքերը խոշոր խոշոր կը բանայ:

— Ասկից վերջ, խնձորով եղչերա մը բե'ր, կը յաւելու պարոնը:

— Ինծի ալ, կը հրամայէ շուշի, բայց իմինս շատ եփած չ'ըլլայ, կը հասկնա՞ս:

Սպասաւորին շփոթութիւնը կը սաստկանայ:

Մօտակայ սեղանի մը առաջ նստող յաճախորդ մը, շուներ դգուռելով խոր հիացմամբ անոր տիրոջը կ'ըսէ :

— Պարոն, այս շուներն խօսիլ սովորեցուցած ըլլալնուդ համար շատ վշտացած ըլլալու էք, բայց ասիկայ շատ դարմանալի է, եթէ զայն ծախելու ըլլաք, սիրով պիտի գնեմ, մեծ հաճոյքով անոր համար հազար ֆրանգ վճարելով :

— Ծախու. չ'է, կը պատասխանէ պաղօրէն :

— Ահա, երկու հազար ֆրանգ պիտի վճարեմ :

— Չ'եմ տար :

— Խօլ քմայքի մը յագուռդ տալ կ'ուզեմ, անաւասիկ հինգ հազար ֆրանգ . . . :

Այս խօսքերուն վրայ շուներ՝ որ լաւ մը իր տիրոջը մօտեցած էր, կ'ըսէ :

— Դուն գիտես, զիս մի ծախեր, եթէ ծախելու ըլլաս, վրէժս պիտի լուծես :

— Է՛, ինչ պիտի ընեմ :

— Ինչ պիտի ընեմ . . . լաւ, այլ ես չ'պիտի խօսիմ :

Որովայնախօսը՝

— Պարոն, ահա՛ կը տեսնաք թէ այս կենդանիին հետ բան մը չ'ըլլուիր, ըսելով խօսքը կը վերջացնէ :

×

Վերջին անէկդոտ մը :

1889ի համաշխարհային արուեստահանգէսին, Լիոնցի մէջ հանրածանօթ, արտակարգ արուեստագէտ մը, Բարիզ բազմփնտուելու գալով Սեն-Լազարի կայարանին մօտ պանդոկ մը կ'իջևանի, և իր գալլստեան առաջին օրերը, պանդոկին սպասաւորները մեծ ապշութեան մէջ կը ձգէ. ասոնք կը տեսնեն որ այդ օտարականը առանձին իր սենեակը մտնելով ոչ ոքի հետ կը հաղորդակցի, և վայրկեանի մը մէջ, անոր խօսիլը ու շատ մը մարդոց հետ վիճաբանիլը կը լսեն, այնպէս որ, երբեմն նոյն իսկ այդ վիճաբանութիւնը սաստիկ կռուի կը փոխուի :

Երեկոյ մը, հալածանքի մը աղմուկը, սանձարձակ ձիու մը քառարշաւը՝ պանդոկին պաշտօնէից ուշադրութիւնը կը գրաւէ : Օտարական ճամբորդին սենեակին մէջ կարասիք տակնուվրայ կ'ըլլային, և տղու մը ձայնը կը լսուի որ օգնութիւն կը հայցէ :

— Զիս պիտի սպաննէ՛, օգնութիւն, զիս պիտի սպաննէ :

Պանդոկապետը չափազանց յուզեալ, սենեակին դուռը ձեռք կ'առնէ :

— Օգնութիւն, կը պոռայ տղուն ձայնը, խիստ խեղդուկ կերպով, այնպէս որ զոհը դարանի մը մէջ փակուած կը կարծուի :

— Բացէ՛ք, պարոն, բացէ՛ք, կը հրամայէ պանդոկապետը, հող բաներ մը կը դառնայ . . . :

— Կորսուէ հեռի ! ես հոս առանձին եմ, և ինչ որ տեղի կ'ունենայ ձեզի չը վերաբերիր, չ'եմ ուզեր բանալ . . . :

— Օգնութիւն ! զիս պիտի խեղդէ ! կը պոռայ, տագնապալից ձայնը :

— Բացէ՛ք, ապա թէ ոչ ոստիկանութեան քննիչին պիտի հաղորդեմ :

— Անգամ մ'եւս կ'ըսեմ, զիս մի՛ զբաղեցնէք, չ'պիտի բանամ :

— Մարդասպան ! մարդասպան ! կը պոռայ ձայնը :

Տասը վայրկեան վերջ, ոստիկան քննիչը կը հասնի, և, դռան ետեւէն բանակցելէ վերջ, դուռը կ'օտրելով բռնի բանալու ըսպառնալիքով, բանալ կուտայ և իր հետ ունեցած երկու գործակալներուն հետ դէպիներս կը խուժէ, ո՛ւր ճամբորդը՝ գունատ, զգեստները խառնափնդոր, խոնջած ճնշուն վիճակ մ'ունէր :

— Օգնութիւն ! կը պոռայ ձայնը, խիստ մեղմօրէն, այնպէս որ դարանի մը մէջէն լսուիլ կը կարծուի :

— Պարոն, այդ դարանին բանալին ? կ'ըսէ ոստիկան քննիչը, ստիպողական շեշտով մը :

Ճամբորդը՝ դողդոջուն ձեռքով զայն անոր կ'երկնցնէ :

Ոստիկան քննիչը ուժգին թափով մը դարանը բանալով, հոն անձեռնոցներուն վրայ պառկած պղտիկ տղայ մը կը նշմարէ ու զայն խնամքով մը ձեռացը մէջ կ'առնու, տղան շատ հանդարտ ձայնով մը կը յարէ :

— Ո՛հ, շատ շնորհակալ եմ, պարոն քննիչ, բայց որքան տաղտկալի ձանձրոյթ մ'է այս, ես, թանձրաքարտէ եմ . . . :

Ստուգել, զոհը թանձրաքարտէ զոհ մընէր, և որովայնախօսը զայն կատարած էր մեծ ուրախութեամբ :

×

Կրկնախօս ձայնի այս զարմանալի երևույթը բացատրելու համար « Մանիսի տը Ֆիզիոլոգի »-ի հեղինակը Ժ. Միլլերը կ'ըսէ թէ՝ որովայնախօսները՝ ներշնչման ատեն շինծու ձայնով և արտաշնչման ատեն բնական ձայնով կը խօսին : « Ես , կ'ըսէ , երկայն ներշնչում մը կ'ընեմ , ախպէս որ ըստո՞ճանին ետ՝ դէպի առաջ կը մղէ որովայնական փորոտիները , յետոյ կ'արտաշնչեմ խիստ անսովոր կերպիւ , խոչակը չափազանց սեղմելով և շատ յամբօրէն օդը դուրս կուտամ թոքերը կծկելով . . . : Խօսելու ատեն որովայնը փքած կ'ըլլայ , և ժամանակաւ կը կարծուէր թէ՝ որովայնախօսները ներշնչման ատեն կը խօսին , բայց շատ շուտ ապացուցուեցաւ թէ իրօք արտաշնչման ժամանակ կը խօսին » :

Թեոփին այսպէս է , բայց որովայնախօսը լլալու համար բնական ընդունակութիւն պէտք է ունենայ :

(Թարգմ.)

ՆԵՐՍԷՍ ԶԱՐԱՐԵԱՆ



Կիսաշխարհիկ պնդումիդ մեջ դիւքական Մագնիսացած սիրոյ ցոլեր կը վառին Խնկարկուծի վեհ խորան մը մոգական Կուգեն ըլլալ ազուր աչեբդ երկնային :

Ու կը պղծես անբիծ սրբեր նեմգաւոր՝ Հեզնամքիդ մեջ գրգռելով անխնայ , Պաշտումի ջերմ փափաք բոյլ սրբին՝ որ Զգուանքի օրն անոր ցաւը պիտ' զգայ :

Բայց յագուրդի այդ պահուն ալ վերջապէս Պիտի ուզե դեռ պաշտել քեզ կուռքի պէս : Փափանքեր՝ մարդկային լուռ կիւրեւորն Զուգին երբեք գոհացում մը՝ յար սիրուն :

Ս. ԽԱԶՈՒՆԻ



ԱԶԳԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուել , շփուել եւ աղամանդներով զարդարուիլ , ինչպէս նաեւ ճան կարասիներ կոկել ամէն կերպով , առանց քսակնիդ պարպելու

Ա. Յ. Լ.

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր ես , աղջկանդ օժիտը կը մտածես՝ դիմէ՛ .
Օրիորդ ես , շիք և աժան հագուել կուզես՝ դիմէ .
Երիտասարդ ես և շիքը կը սիրես՝ դիմէ .
Տարեց ես և ցուրտէն պատուարուիլ կուզես՝ դիմէ .
Տղաքներ ունիս որոնց պիտոյք զանկը կը ճամեցնեն՝ դիմէ .
Անուանացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ .
Եկածը Կաղանդ , է՛ նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ . . .
Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ .
Ձեռքդ պարապ ճամբայ քալել չե՛ս սիրեր՝ դիմէ .
Կուզե՛ս տունը կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ .
Առաջնակարգ և տոկոն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ .
Կուզես շիք , ճաշակաւոր և լաւ տեսակ փողկապներ ունենալ՝ վերջապէս կուզես ոտից ցզուխ հագուել , շքուիլ , պնդուիլ

դիմէ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ԳՈՒՅՈՒՄՃԸՂԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի , ճերմակեղէնի , ֆանթեզիի , աղամանդի , ժամացոյցներու , շղթաներու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ և մնացեալ գումարին հարիւրին 5ը չաքաթական վճարմամբ .

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ .

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն աղամանդեայ գոհարեղէնները երբ դորձածուած բայց անվնաս մնացած ըլլան , հարիւրին 10 զեղչով , իսկ ապառիկ ծախուած և անվնաս մնացած միմիայն աղամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով ետ կ'առնուին :

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Ք3-30

Կ Ե Ր Ա Մ Ս

Ոչ թե կակուղ բամպակի պէս մի պիւճթէ՛ք

Այլ կնոջմէս խիստ փառաւոր մի *խօսքէ՛ք* :

Ամուսնութեանս օրէն ասդին մէկ շաբաթ
Աղէկ գացինք կնկանս հետ սանկ չաթ-բաթ
Ոչ ան ինծի օրմը ըսաւ *խառնախառն* :
Ոչ ալ իրեն զսնուեցայ խիստ *ախառն* :

Ամէն իժիւր խնդում երես կերելար ,
Ու *խառնախառն* ետ չէր ձգեր վերէն վար ,
Թէ մաքրութիւն , եւ թէ աւել , կերակուր ,
Կըմէր կըլլար զի չունէր ինք *խառնախառն* :

Երջանկութիւն չէ՛ր այլ չնազ պարագան
Շալէի պէս քուր աչիս *ախառնախառն* ,
Ուր փաթթուած կենակցեիք անխօսուկ
Զգգալով հոն ոչ ցաւ , ոչ վիտ եւ ոչ սուգ :

Մեզ պէս սերով չկար երբեք , ճեզ կերդնում
Փնտռելն ալ պարապ բան էր ... սիրտ հասնում ,
Մեզի մասով ցուցնէին մեր բաղը
Թեւեւ պակսէր մեզ պղպղոր , մերթ աղը ... :

Օր մը կինս ինչպէս կըլլայ չեմ գիտեր ,
— Կնիկները միթէ չե՛ն քոյլ կամփի տէր —
Առտուն կանուխ կառնէ գլխուն սեւ շալը
Բաղկութեամբ մը՝ ուրուն պակսէր մէկ լալը :

« Ինծի նայե՛ » կըսէ յանկարծ խելայեղ ,
« Ֆիլոսոփա գիտցածդ չէ ալ աս հեղ
« Ի՛նչ ըլլալդ մինչեւ հիմա ինձ մուր էր
« Սակայն այսօր *ախառնախառն* լոյս չեմ ուտեր » :

« Քանի՛ գիտէր երազիս մեջն էր տեսայ ,
« Ուր Թագուկին եղած էիր նոր փեսայ ,
« Ճիլվեցէիք զահգահներէիդ ո՛րն ըսեմ ,
« Ֆիլոսոփա գիտցածիդ չափ չէ *ախառնախառն* ... :

« Ֆիլոսոփա , հոգիս , խուս , ախ մասամ ...
« Ի՛նչ մ'համբերէ բացատրութիւնն հիմա տամ ,
« Երազիդ մեջ տեսած պակսերդ Թագուկին
« Սին կասկածներ յարուցեր է մեզդ բուկին :

« Գիտեմ , գիտեմ , դեռ իս չառած ալ արդէն ,
« Երբ ուտ ասեմ դու կանցնէիր մեր արեւն ,
« Պատահանին առջեւ նստած *բառաւոր* ,
« Վեր նայելուդ կերեցունէր չոր շալը :

« Վրաս բարի , *ախառնախառն* անգամ չեմ տեսներ
« Եւ ոչ թէ իս հետաքրքիր սիրտ ու սեր
« Բու կասկածդ տղայական է Ֆիլոս
« Գիտցիր թէ սիրտ քափանցիկ է զերդ *ախառնախառն* » :

« Խառնախառն քոֆը » չըսէ՛ մի իսկոյն
Այ երեսս ոչ խիստ մնաց եւ ոչ գոյն ,
Ասով չեղաւ , ձեռքը բարձր դէպի վեր ,
Սպառնացաւ զարմել կոուր սնաւեր :

Հաս մը , հաս մ'ալ , նա հաս մընալ եղ *ախառնախառն* ,
Կնկան ծեծը կերած էիր *ախառնախառն* ...
Միտ կրկնելով իր յանկերգը անտարբեր
Կիջեցնէր հարուածները միտ տարբեր :

Մեղաւորս իր ծեծերուն նշանակ
Երբ խիստ ձայնով մ'ըսի « հերիք տան զաւանկ »
Ահա կրկին թեւն սկսաւ վերանալ
Շունչ մ'ունէի , վրայ տուի ես ան ալ :

Մնացեր ինկեր բուրջ եմ կտրէր չեմ գիտէր
Պատահալով ի՛նչ հեթ *ախառնախառն* ի՛նչ էր ,
Երբ ի՛նչ մը վերջ բացի տակաւ աչիքս
Միտս եկան *ախառնախառն* պարտքերս ... :

Դրամածի՛ս ... չար սովորոյթ ու զագիր
Ու կերցուց ինձ տալ *ախառնախառն* մը *ախառնախառն* ,
Անտրոջս ոսկիները իի ափով
Աղջիկն հիմա կը պահանջէր իր կոուրով :

Զայնս կտրուկ բիբերս վար դողդոջուն
— Շատ կաղաչեմ մի հարցնէք հոս « Ինչու »
Ըսի , « հետեակ , չնազ , հուրի կինս ես դու
Հինգ ոսկի տուր շուկայ երբեք վաղն առտու »

ՄԱՐԿՈՒԹ

ԶԱՏԻԿ—ՁՈՒ ՅՕԴՈՒԱԾ

(Շար. ե. վերջ)

Ձատիկ-ձու մեր յողուածը հազիւ աւարտած, մեքենան սկսաւ իր անխոնջ աշխատութեան ու հինգչարիիէն անդին չի կրուցանք բան մը ըսել անցեալ չարթու։ Եւ աղէկ ալ եղաւ, քանի որ օրը օրին այս անգամ կուգանք աւելի թարմ պատկերներ ներկայացնել մեր ընթերցողներուն, աչքերնուս տեսածէն, ականջնուս լսածէն։

Ուրբաթ

Օր վաղվզելոյ եկեղեցի երեկոյին, վասն դիտելոյ զթաղում, օմուզ օմուզի և խոկիւռաբանութեան։ Այսօր պեխաւորք կանուխ դառնան շուկայէն, և կանայք յետ մարտելոյ զֆասուլեաս, լաւագոյն իմն ծեփեալ և սրվայեալ բուռաւորք և գրպանեալ զգօգուրու թաշկինակս դիմեն Տաճար, և օրիորդք սեղմ քօռսէյուք կաս կապուտ զերդբանճար, հոս հոն վասն տիտիկի փնտռեն միճար, և կենան յոտնկայս զերդ մեռելի մոմ . . . չար նաչար . . . :

Գրեթէ ամէն թաղի եկեղեցիները խուռն բազմութեամբ լեցուած էին թաղման իրիկունը, այնպէս որ եթէ այս տարի Տէր պապաները իրենց բացը գոցելնէն վերջ մէկ մէկ Քոհտի Գոնքի չի գրպանեն . . . խելքիս պիտի գայ . . . (իմաստութիւն մեծ) :

Անունը չեմ ի տար, թաղի մը եկեղեցւոյն մէջ գաւթիթը, լսուած խօսակցութենէն նմոյշ մը ներկայացնեմ ձեզ, զոր կարդալով կարելի է մարմնիք, մինչդեռ նոյն այդ ենթակաները թերեւս չի կարմրեցան իսկ։

Դաւիթին երկու կողմն ալ, ոչ թէ սեղ, այլ ինքզինքդ կը կորսնցնես։ Բարձրէն դիտես, ծաղկազարդ պարտէզ մը, մէջտեղը հիմալայեա լեռանց շղթան է որ կերկարի կարծես տձե ելեւէջներով, ու գետինը սքօռքա մը լեցնելու չափ գոյն գոյն կօշիկներ, սկառքին, պէպէ, ֆիօնկլու, ակոռաֆլը սիւրի քիթ, ա լ'անկլի, կիւտիւկ եւայլն։

Երկու օրիորդներ կը փսփսան։

— Ձատկին վիզիթայի գալու ըլլանէ աղուոր մը պէտք եղածը պիտի ըսեմ, նայէ այս իրինկուն կանուխ կուգամ ըսաւ, իրեն ալ ըսի որ հո՛ս գաւթիթը պիտի կենամ . . . :

— Էյ խըյանէթ հիմա ուրէնէ կուգայ, տղան ո՛վ գիտէ ինչ գործ ունեցաւ, քուրուկ ան չէ՞ ես . . . առջին տիւզ քօռսէյիս ժառթիէնները բէք կը քաշեն կոր, աճապա կամաց մը թող տամ . . . :

— Էյ կըլլայ, ինչո՞ւ չէ, ես սանկ քով կենամ, դուն պէճերուէ . . . :

Ու աչքովս տեսայ նազելափալփաշուք օրիորդին բէշը վեր առնելը, ի խնդիր ժառքիեռին։

Ներսը բազմութիւնը տակաւ կը լեցուի կիններու յատուկ կողմն ալ աւելի ուս ուսի վրայ։

— Քա արեւնուտ համար ըլլայ կտորճիկ մը չաքխանիդ հանեցէք տէ մենք ալ տէր տէրոջ սուռաթ մը տեսնանք . . . աս որ սահաթ է մառուլի պէս կլոխնիդ ցըցեր տընկուեր էք, չօգ չէ՛յ . . . :

— Հրամանեցէք տիկին, եթէ մեր գըլխարկները արգելք կըլլան, կրնաք առաջ անցնիլ։

— Առջինիդ ալ վար ասնի ետեւնիդ ալ, պարէ խօյի հաւատով մը ըլլաք նէ՛ նէ՛ իսէ, ըրած լաֆէրնիդ կիմանամ կոր տէ կետինին տիպերը կասնիմ կոր . . . :

— Ներողութիւն տիկին, մեր խօսակցութիւնը երբեք չի կրնար խանգարել ձեր սրտաբուխ աղօթքը, մենք մեր լեզուաւ կը տեսակցինք . . . :

— Թէ՛վէքէլի չէ քի, մէյտան սիւփիւրկէսի պէս տուռերնուդ ետին էք մնացեր տէ, կարդուինք տէյի խըլս այաղի պէս պատերն ի վեր կելաք կոր . . . սըյըլս շուներ, սա նայէ, ասանկ օրով մեղքը թաթխուեցայ քա՛ . . . երկու աշուղնիդ քէօռնայ . . . :

— Ինձի նայէ տուտու, ալթըն հէրիք հուրքդ դուրս տաս, սապօն ըլլայիր նէ քէօ-բիւկդ կտրած էր տիօր օր հիմա, լեզուդ քեզ քաշէ տէ՛ ձգէ քի աղջիկները ժամ տեսնան, կըսէ օրիորդներուն մայրը մատը ձեռքի աղօթագիրքին մէջ դրած գոցելով։

— Էյ տօղուստու... խերերնին տեսնաս քուրուկ, թըրֆանտա ես հասուցեր, էօմրինէ պէրէքէթ, հէմէն առջիդ ձգէ տէ կեռտանդ կախ փորդ ի վար խնտայ քի ասանկ զաւկներ ունիմ տէյի, որ սահաթ է խուստէններուն իլէն չիյտեմ բէշերնուն ինկեր են, Երկնաւորին դառցող տէ երկու ծունգ աղօթք ընողդ ու է... :

— Ինձի նայէ քի քեզի ըսեմ... անոնց հարը պէլլի պալլը հէմ ըռզէհլի հաճի Դամիանոս կըսեն քի իւմիւտիւնեա կիտէ կը ճաշնայ, անոնք տուըն չեն մընար, հոգդ, խուրսախ մի չինէր հրամանքդ, ամա ես չեմ ի տար կոր եօխսա, էկէր քիմ էնանէսիէն ուղղորին հանէի տայի նէ՞ ասոր թողնէրս կոգս կը լեցուէին... :

— Հախ ունիս, հախ հախ... ես քեզ մեղայ, ես չէի ըսողը, ելլամ երկու լախըտը ընելու ըլլամ նէ, սէօյլէր վէրէմի պիտի ըլլամ, անոր աղէկը հայտէ պանդը նայէ քուրուկ, թաղումը կը պտըտցունեն կոր, սօն տէֆա օրէնքնուս հաւատքնուս ինանք, ըսելով կարճ կը կապէ խօսքը, մինչ անդին օրիորդները իրենց գլխարկները կը ճօճեն ալ աւելի նիսպէք ընելու պէս։

Շաբաթ

Օր ճրագաւոյցի և խնդութեան։ Այսօր մի միայն փիսիկները տուըն կը մնան, եկեղեցիները այնքան կը լեցուին որ ահագին տաճարները մատուռ կը դառնան խուռն բազմութեան առջև։ Կիներ և օրիորդներ իրենց էն gala թուալէթով կը դիմեն Եկեղեցի, իսկ ընդհակառակը այրեր աղտոտ սուռաթ հե ի հե հագիւ իրենց գործերնէն կը հասնին, մատերնին ձուկ հոտած, գիտէ՞ք ինչու, որովհետեւ խթման այդ երկուսին ընտանիքի տէր աղաները չուկայէն անպատճառ մատերնուն մէկ մէկ վաճառ անցողով կը դառնան, զոր տուըն ձգելով վազն ի վազը հագիւ կը հասնին եկեղեցի, (այս վաճառը զիս չը գիտնաք ու նախանք

ձիք, հաւատացէք թէ զիս մէկը տուըն չուզեր տանիլ, վախնալով որ վարագոյրնին վեր կառնեմ, խթման գիշերին տուները կրուած վահանը այն համով ձուկն է որ ես, դուռն և Պուսասցի Մաննիկ տուտուն կատուի պէս լըզուըտուելով կուտենք)։ Խթման երեկոյն անցած եկեղեցական պատկերները գծելու համար այս անգամ պիտի առնեմ այն թաղը, ուր բնակող Եւայի թողնուհիները իրենց յատուկ ապրելակերպ մը ունին, չոգենաւորին լայն է իրենց սըրտին պէս, և որոնց մատները սոխ ջարդելէն չէ կողոտած։ Ամէն քաներնին յարմար ըլլալով հանդերձ, դժբաղդաբար Եկեղեցիներն պզտիկ է... իրենց տարիքին պէս։ Օրիորդները երբ իրար գան կուտ մօռնին կըսեն, իսկ միւսիւնները իրենց գլխարկը ու չուրմա կը չինեն օդին մէջ լուռ անխօս, աղաները պոխ կը խաղան, տիկիներն ալ փառաւորապէս աչճի կը չախեն։

Ինչ և իցէ, մենք հիմա այդ ինտէլիքէնտ թաղին խթման իրիկունը պիտի նկարագրենք, եթէ վստահ ըլլանք թէ չպիտի ձանձրանաք։

Ժամը տասն էր. երբ հասայ եկեղեցի, հոն արարողութիւնը սկսած էր արդէն։ Դուրսը Տաճարին չիջաբակը կանացի պարտէզի մը փոխուած էր կարծես, հոս կին, հոն կին, օրիորդ, հասուկ խէչ, մատնոց, թգալնոց, կարճ բէշի, երկայն տտուռով, բոլորն ալ հոգ էին գրեթէ։

Հաւատացէք եթէ օրիորդ մը ըլլայի, Զատիկ-ձու Փիստանի ձեւը որոշելու համար այդ թաղը կը պտըտէի քանի մը օր յաջորդաբար, այնքան չիք, այնքան աչքաուռ հով մը ունէին ամէնքն ալ, կարծես իրարու հակառակ խըզ փախցնելու մտօք պատըտուած։ Ինչ գլխարկներ, ինչ ձեւ, ինչ քերտալախներ, ինչ ժապաւէններ, ինչ անուշահոտութիւններ, հաւատացէ՛ք, ես որ ջիզ ըսուած բանը բնական պատմութեան մէջ սովորած և իմացած էի, այս անգամ անոր հիւանդութենէն բռնուելու վախը ունեցայ, այնքան զգլխիչ էր, թէ՛ տեսարանը և թէ՛ մթնոլորտը։

Խմրագիրդին համար ամէն դուռ բաց է իրտին, բայց ես ոչ թէ դուռ ալ տսեղի մը ծակը չի կրցի դառնելու Տաճարէն ներս մըտ-

նեղու համար, մինչ եկեղեցական արարողութիւնները կը կատարուէին այնքան հեռուն, ուրկէ նամակ մը տասը օրէն կը հասնի, ո՛ր մընաց ձայնը և բառերը:

Վերջապէս ինչպէս եղաւ չեմ գիտեր, կերած խմած ու պարտապանաց տիկնոջ մը ջոջ հրմշտուկէն օգտուելով հետեւեցայ իրեն ու ինքզինքս գտայ աղջկանց բարձրագոյն դասարանը կարծես: Չորս դիւ օրիորդ:

Ու հոն միացի գամուած stupefè!

— Պօն սուաւ Անժէլ, քօման դ'ալէ վու...:

— Մէնսի Սօֆի... թիէն... մը նը վու զէ բա վիւ...:

— Մուա նօն բլիւ, քը սէ դ'էնսիւբօութապլը, ալէք թան տիւ մօնտ...:

— Ա՛... ուի՛... նու սօմ թուս սէնէ...:

Ու մինչ յապուշ կարած կը դիտէի զիրենք, ինքզինքս մայրապետներու վարժարանը կարծելով, մօտէս սինօլը տուտու մը խօսք առնելով:

— Էյ ինձի նայեցէք աղջիկներ, ծուռ լեզունիդ կղպեցէք տէ երկու սըրա շարական լսենք, ատ լաֆերը տունն ալ կրնաք ընեն...:

— Ինչպէ՞ս տիկին մայր...:

— Հապա՞, մարերնիդ ալ հոս է նէ անոր ալ կըսեմ... տեղը՝ չիգայ նէ մեղայ, վըռ վըռ վըռ վըռ որ սահաթ է, օխտը օխտ էօղիւշիւմ՝ ըլլար նէ մախառան փաթթած էիք...:

— Նէքութէ բա՛ մա չէն...:

— Էտէպիւղ շուներ, սա նայէ պերաններն ալ կաւրեն կոր... աման հիմաճուկուանները դօզլտեանըն պուռնու տիւէր...:

Բիչ մը անդին:

— Քա մեղայ, պօյերնին զաթը սըռքս, մէյ մընալ խկէմրիին վրան ելան, քա ինձի նայէ օրիորդ, վար ինչիր տէ մենք ալ երկու աշկ պան տեանանք...:

— Ներեցէք տիկին, ձեզի համար անհանգիստ չեմ կրնար ըլլալ, դուք ալ կըրնաք իմ ըրածս ընել, փոխանակ անճաշ դիտողութիւններ տեղալու գիտուս...:

— Իշտէ նայէ թէմիդ խօրթոյէդ հասկըցայ քի վարժուհի ես տէյի, հրամանքդ ասանկ ընես նէ չօճուխները ինչեր չեն ընեն աճապար... տէ հայտէ վար ինչիր...:

— Ինչո՞ւ կըստիպէք տիկին, չեմ կրնար տեղի տալ ձեր քաբոխներուն, հոս ամէն մարդ ազատ է՝ Աստուծոյ Տաճարին մէջ, և ոչ ոք կրնայ դոյզն ինչ դիտողութիւն ընել այս մասին...:

— Հասկըցայ՛, հասկըցայ՛, կարճ կապէ, զէրէ սիրտս չառընդը առաւ, կուզեսնէ իսկէմիւրդ վրայ մէկ հատ մը տահա դիր տէ ճամպազութիւն ըրէ, զաթը մէրամդ գիտեմ, ինքզինքդ ցուցնես տէյի կէմի պապա ֆինկօ ըլլայ նէ թէքէն պիտի ցատկես, վա՛յ անանքն պաշնա ըսելով տեղ կը փոխէ կինը, ու ձայները կը կտրին:

Պատկեր մընալ:

— Երկու աշկը քէօնայ, ըռաբութալը ֆիստանըս խուեղ...:

— Ինչո՞ւ, հապա Մէօհրիւպէն վարպետ է կըսէին նէ...:

— Քա ճանըմ՝ աս տարի ինչ եղաւ չիյտեմ, ձեռքը շատ գործ ունենալուն իքինճի բռօլան պիլէ չըրա...:

— Էյ սանկ տառցիր նայիմ...:

Բովերնին կեցող ճատալող մը:

— Ինձի նայեցէք, հոս ֆիստանճի տո՛ւն է չէնէ մի ժամ, սա՛ հասկընանք... ամօթ կըսեն պան մը կայ, ֆարաղա տուներնիդ երթաք նէ նայեցէք կուտօններուդ...:

— Քեզի՛ ինչ կըլլայ կոր, դուն աղօթքդ նայէ, չօգ չէ՛յ...:

— Հապա չըսեմ... ֆիստանին պիլիմը մուտեցնէ պիտի ընես տէյի երեք եղաւ նասըրիս կոխեցիր...:

— Էյ բաւտօն...:

— Կըլլայ՞ եա՛, իս մարիկ մարիկ պէրէլէդ սօզրամ պաւտօն...:

— Մարիկ... սա ժամուն կնիկներուն ծառքէն ա՛ւան...:

Ու կը խորհիմ պա՛ մը թէ, նոյն այդ թաղը իբր թէ Պոլսոյ էն զարգացեալներունը պիտի ըլլայ, ուր կը լըսէի խօսակցութիւններ, որոնք էն ստոր փողոցներու մէջ անգամ աւակաւ անլսելի կըլլան քաներորդ դարու սկիզբը:

Ալ չպիտի հաւատամ, չպիտի խաբուիմ ալամօտ թուալէթներուն, նուրբ խօսուածքներուն, որովհետեւ մօտէն փորձառութիւնս յիս համոզեց թէ՛ այդ ֆուռ ֆուռ բէշերուն և բիւլլար ծախուած ընտանիքներուն տակ ինչ սիրտ խառնուուք բարբեր կան:

Կիրակի, Երկուշաբթի, Երեքշաբթի :

Օր Զատիկի, այցելութեան, գունաւոր հաւկթի, չէօրեկաց, զպէս պէս ըմպելեաց և կառախըղըղաբանութեան :

Այսօր արք պճնեն զմարմինս իւրեանց, և հետ հագնելոյ զսե ուրտէնկօթս, և զկըռճ կըռճ լուսթուռինս, զերդ նոր փեսայ, խաղան զմիսաֆիր տուն, վասն շնորհաւորելոյ յարութիւնն Քրիստոսի եւայլն :

Ամէն տարի երբ կատարուիմ Զատիկի վիզիթներու վրայ տասը քսան տող մրտել, հաւատացէք թիֆօյի պաղ քրտինք մը կը թրջէ ճակատս ու կաս կարմիր կըլլամ իմ գրածներէս ես ամենալով :

Մինչդեռ սովորած փորիկ վիզիթաճինները ամենայն լրջութեամբ և ըրածնուն կատարեալ գիտակցութեամբ, պզտիկներու քար հանելու չափ վարժ ձեւերով տունէ տուն թաղէ թաղ կը պտըտկին այնպիսի յօժարակամ, զոր երբեք չպիտի կրնայ ընել թերեւս օծուած իւղ բաշխող ժամկոչ աղբարը :

Այս տարի ուրախ եմ յայտարարելու թէ վիզիթները բաղդատմամբ նախորդ տարիներուն նուազած էին, ու փողոցներու մէջ կճըռը վրան նոր փեսայ խըյաֆէթլի Զատիկճիններ շատ տարբեր երեւցան մեր աչքին : Ուրախ եմ :

Ձեռ գիտեր ինչ հաճոյք կայ Ս. Զատիկի առթիւ առանին երեք օրուան անուշ հանգիստը ձգելով, այս տաքերուն փողոցները կրկնելու մէջ :

Հապա այցելութեանց սլանալ և միօրինակ խօսակցութիւնը : Մտիկ ըրէք օրինակ մը տամ հոս, որ կարծեմ ամենուր տունն ալ կրկնուեցաւ սա երեք կիրակիներուն մէջ :

Վարը դրանը առջև վիզիթաճի մը բէյտահ կըլլայ, որ դուռը չի դարկած, ինչպէս սովոր են ընել բանթէլօնին կոնակի գրպանէն փոշի յատուկ քուրջը հանելով կօշիկները կը մաքրէ և :

— Զա՛թ . . . դուռը կը չալէ :

Վերը զսպանալի մը պէս լտրած տիկինը կամ օրիորդներին մէկը որ, նոյն ատեն պատուհանին առջև նստած խուզի քնտաւմեսի և կամ Հսճի Պէրիլի աքլաէն կը ծամէր, Վար կը վազէ դուռը բանալու :

— Քրիստոս յարեալ ի մեռելոց . . . Ըսելով ներս կը մտնայ վիզիթաճին, իբր թէ մօր :

այդ լուրը Բամշաթ քայէն բերէր վազն ի վազը :

— Օրհնեալէ Յարութիւն Քրիստոսի, կը պատասխանուի, մինչ վիզիթաճին ձեռքի գաւաղանը անկիւն մը դնելով, ձեռքերը կը շփշփէ ու պոթիններուն կոչկոչին հայրան եղած սանդուխներէն վեր կելլայ, ուր տիկինը կը դիմաւորէ սուր ժպիտ մը բերնին երկու քովերը :

— Հրամայեցէք . . . :

— Անցէք կաղաչեմ . . . :

— Զի վայրեր . . . հրամայեցէք . . . :

— Մեռսի . . . :

Ամէնքը սուս բուս մէկ մէկ աթոռ կամ ըղձոց կընարեն ու կը նստին : Գլխու ճօճումներէ վերջ, որը իրարու երես որն ալ սանկ դուրս կը նայի, ու վերջապէս տիկինը խօսք բանալով :

— Աս ինչ աղուոր օղեր կունենանք կոր . . . :

— Այո՛ տիկին, ալ չընէ մի ես . . . :

— Բայց առտու իրինկուն սեքին կընէ կոր . . . :

— Այո՛, բնական է . . . , ո՛ւր է (տանը աղային անունը տալով) :

— Այսօր վիզիթաներ ունեւ տէ . . . :

— Այո՛ . . . բնական է . . . :

— Այս առաւօտ եկեղեցի դայիք հարկաւ . . . :

— Այո՛ տիկին, այնչափ բաղմութիւն չի կար . . . :

— Ճանրմ հարկաւ իմացաք, խթումին իրիկունը . . . թաղին Տէր Ե. ը իբր թէ պահարանը նստող մէկ քանի տիկիններու աթոռ դնելուն համար բերանը բացեր է եղէր, մինչդեռ իրաւունք չունի, քանի որ թաղ. Խորհուրդին դիտնալովն է եղէր . . . :

— Այո՛ տիկին, այդ քահանային լեզուն քիչ մը երկայն է տէ, բայց կարեւորութիւն չունի, ան ալ նոր է դեռ, մորուքին մէջ ճերմակ իյնայ նէ կը վարժուի այդ տեսակ բաներու . . . :

(Այս պահուն օրիորդը առանդական իքսիւր-չէքերը կը բերէ) :

— Շատ տարինելու . . . :

— Շաքարէն չէք առներ . . . :

— Շնորհակալ եմ . . . :

Հիմա խմած ըմպելիքը հախ ընելու հասելով ներս կը մտնայ վիզիթաճին, իբր թէ մօր :

— Իրաւունք ունիք տիկին , քահանաները երբեմն չըզղըէն կ'ելլան կոր , բայց ինչ օգուտ . . . :

— Այս տարի ինչպէս հիւանդ ունեցա՞ք...

— Գրեթէ միշտ տիկին , բայց փառք Աստուծոյ հիմա բոլորն ալ աղէկ են . . . :

— Մենք ալ շիտակը , մինչեւ անցեալ չարթու քիթիս ջուրը չի կտրեցաւ . . . :

— Ալ ասկէ վերջ օդերը կը նստստեն տիկին . . . :

Ու մէկ վայրկեան լռութենէ վերջ .

— Էհ . . . մնաք բարեաւ տիկին , յարգանքներս . . . :

Կը մեկնի : Մինչ տունը մնացողները ձայն ձայնի :

— Զիգայիր նէ խաթրս կը մնար շիտակը . . . քա ճանրմ' ամէն բան պարիթ եղաւ աս Զատիկի սուլու վիզիթաճութիւնը խազըն տնկեց . . . :

* * *

Զեզի խրատելու համար չէ խօսքս , բայց ամէնքս աշխատինք քսան ղրուշով լրագրի սիւնակները անցնիլ քան թէ գաւաթիկ մը լիքէօռով սեւորիին քէօշէն :

Հաւատացէք եթէ կանանց մէջ ըլլար այս սովորոյթը , մինչեւ հիմա չատոնց տէօտէ ըրած էին , իրենց մալաքօֆ բէշերնուն և ձիւ պոխտներնուն պէս . . . :

Բայց ինչ օգուտ , գրուած է թէ՛ Զատիկը պիտի տօնուի ու թումաճան աղանուրու պէս մարդիկ ժամկոչներու պէս տուն տուն հաւատիս պիտի տան ,

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌՆԵԼՈՅ

ԼԻԼԱ

Մեր այն գաւառի բաժանորդներուն , որոնք տակաւին չեն ղրկած իրենց բաժնեգիրը , չպիտի ղրկուի Հանրագիտակ յաջորդ չարթուէն սկսեալ : Իսկ անոնք որ կ'ուզեն նոր բաժանորդագրուիլ Հանրագիտակի , պարտաւոր են կանխիկ վճարել բաժնեգիրը մանսօքօսով :

Պ Ե Դ Թ Ա Ն Բ

Թաղարներուն շուրջը մենիկ է նստած Զրեմաղագեղ կոյս մը զուարթ անխրոնով , Հրապոյրի ցոլեք ցայտեն ով Աստուած վառ աչքերէն այդ հուրիին հոգեթով :

Թիկնարոռին վրայ հանգչի սընապարծ , Հոռոտելով ծաղկանց բոյրը անուշակ , Ըզըլլսելով խանդոս սիրեքը յանկարծ Ռոնք կեանքի դառնութեան են անգիտակ :

Այն՝ պըչրասէր ձեւեր ունի , ո՛հ բսեմ , Ռոնք կուտան իրեն դեմքին գեղ ու փայլ . Սակայն գիտէ նուիրական ու վրսեմ Զուցադրել զինքն ամենուն անայլալ :

Բուրասանին մէջ բուսած են շուշան , վարդ , ձերմակ , կարմիր միշտ կը սքսեմ բոյր ու բոյր Կոյսին ժրպէս ալ կը բացուի սիրոյ վարդ , Զիրար քովեն անուշներով համասփիւռ :

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԷՉԵՐԵԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Վառնա . — Հ. Բ. էֆ. Մեր հաշիւներուն մնացեալ մասին համար դրած էինք ձեզ : Այս բաթայով կը խնդրուի որ ղրկէք ամբողջը :

Յովկատ . — Օրնիկ էֆ. Զարգեան : Հաճեցէք ձեր բաժնեգիրը եղող 54 ղրուշը մեզ ղրկել :

Օրտու . — Յ. Պ. էֆ. Հաճեցէք 54 ղրշ. ղրկել մեզ անմիջապէս , եթէ կուզէք որ թիրթիրը չարունակուին :

Պրուսա . — Մեր նամակին պատասխանը դեռ չենք առած : Ինչո՞ւ :

Քիւմասի . — Զարեհ էֆ. Ստեփանեան : Անկուտի թերթ կարդալը թէեւ չենք հասկընար , սակայն եթէ վճարել չէք ուզեր , գոնէ « ալ մի ղրկէք » ըսելու չափ ալ խիղճ չունիք . . . :

ԻՆՉ Կ'ԱՆՑՆԻ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Եթէ օրաթերթի մը սիւնակներուն մէջ երեւնար վերնագիրս, աւելորդ պիտի ըլլար ըսել թէ ընթերցողներուս ուշադրութիւնը՝ ուրիշ բառերուն պիտի երթար, բայց հոս կրնամ ըսել ու պատմել ուշիմութիւնը մեր տանը փիսիկին որ այնքան հետաքրքիր է իմանալու թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ առտուընէ մինչև իրիկուն . . . Խոհանոցին մէջ, բայց ո՛չ սիրելի բարեկամ, իմին փիսիկս չը պիտի հետաքրքրէր ընթերցողները այնքան՝ որքան գաւառացի աղջիկը il va sans dire, ուրեմն պիտի պատմեմ երկու բառով թէ, մօտաւորագոյն անցեալի մը մէջ ինչ կ'անցնի կը դառնայ այն տեղերը, ուր հայ աղջիկը օր օրի վրայ Գարթալի բերքերուն պէս conservee ըլլալու մօտնուած է, սա տարբերութեամբ որ առաջինը թիթիկէ տուփերու մէջ, իսկ երկրորդը au coin de la maison ! (կը վախնա՞ս կոր տունին pkoյին ըսելու ?) :

Դաւառացի աղջկան ճակատագիրը վըճռուած էր արդէն այն օրն իսկ, ուր Պոլսեցի հարսեր դրամօժիտի համաճարակին հետ մուտ գտան հոն, և այսօր Թրախօման այն աստիճան մեծ ծաւալում մ'առած է որ նոյն իսկ 150 դահեկան ամսականով գոհացող երկտաղարդ մը 1500 ոսկի դրամօժիտի քիթ չը կախելու խտտէն վարակուած է. համառօտ բայց ճշմարիտ ապացոյց մը, եթէ կը հաճիք վերջերս երբ ծանօթ բարեկամուհիի մը հետ տեսնուած պահուս կը հարցնէի թէ — տիկին ինչո՞ւ դպրոց չ'էք խրկեր ձեր 12 տարեկան աղջիկը, քանի որ նիւթականնիդ կը ներէ :

— Սակայն բարեկամս, ըսաւ, 100 ոսկի միմիայն ունիմ աղջկանս համար տրամադրելի, և կը խորհիմ թէ մեր արդի բարքերը նկատի առնելով աւելի պատշաճ պիտի ըլլար այս գումարը աղջկանս հետ ամուսնացող մանչուն տալ քան թէ վարժարանի վատնել, հիմայ արժանիքը փարային վրայ է և ոչ թէ դաստիարակութեան, աղջիկը փարայ ունի՞ կը հարցնեն կոր, ուսեալ է, դարգացած է, տարիքը ի՞նչ է, քէօն է, թոփալ է ըսող չ'կայ, ՓԱՐՍԱՅ ՈՒՆԻՐ,

թրախօմային ի՞նչ խապար, ահաւասիկ միակ միջոցը աղջիկս ամուսնացնելու :

Ստիպուեցայ խելացի և տրամաբանական գտնելու տիկինին պատասխանը, վասն զի . . . կը հասկընաք անշուշտ, վասն զի . . . մեր ամուսինները պահանջկոտներ են :

Վերջապէս գաւառացի մայրն ալ սկսաւ դրամօժիտի տանջանքներովը տառապիլ և հեռու իր աղջիկը դաստիարակելէն, ապահովագրական ընկերութեանց յայտագիրները կը խօթէ կոր ամուսնոյն աչքը :

— Մա՛րդ, կարդա՛ տես, մեր աղջիկը 3 տարեկան եղաւ, հիմա սկսինք ամսէ ամիս 75 դահեկան տալու, 15 տարի ետքը 135 ոսկի միայն տուած պիտի ըլլանք, մինչդեռ ընկերութիւնը մեզի ֆայիզովը մայիզովը 500 ոսկի պիտի տայ, և Զապելին օժիտը ինքնիքն պատրաստուած կ'ըլլայ :

Երանի հաղար անգամ երանի այն բախտաւոր մանչուն, որուն ապագան ալ անդին ԻՆՔՆԻՐԵՆ պատրաստուած պիտի ըլլայ, և երբ մայրիկը բողոքէ թէ՝

— Տղա՛ս, ատ աղջիկը կ'առնես կոր, բայց անիկա երկու երկու ալ քանի կ'ընէ ըսես նէ չիյտէ, այն ատեն բաղդաւոր մանչուկը պիտի բացագանչէ :

— Հոգ չէ մայրիկ, մէյ մը սա 500 ոսկին առնէինք տէ, ետքեն ես անոր յաւելում, բազմապատկութիւն չէ ես, չղթայի կանոնն ալ կրնամ սովորեցնել :

Ուրիշ մայր մը .

— Տղա՛ս, ես վրում, ատ աղջկանը աչք կը տնկես կոր ես, փարայ չունի կ'ըսեն կոր :

— Ի՞նչ կ'ըսես մայրիկ, assuree է անիկայ, թա՛խ օրօրօցէն, խապար չ'ունիս . . .

Մինչ անդին աղքատին աղջիկը, որ ոչ assuree է և ոչ ալ կանխիկ կրնայ վճարել ? ով գիտէ խեղճին գլխուն մէջ ինչ կ'անցնի կը դառնայ :

Ս. ԽՈՐԷՆ

Ձ Ե Կ Ո Յ Ց

Մեր սրամիտ երգիծաբանը ԿԱՎՈՅՈՇ անձնական տկարութեան պատճառաւ չի կրնալով հասցնել իր յօդուածը, կը խոստանայ երեւիլ մեր յաջորդ թիւին մէջ :

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Իր շրթերուքեամբ, պարծանք այս դարուն,
Մեր խմբագրասան մեզ, ո՛հ, զարգարուն,
Երբ իմ սեղանիս առջեւ բաւապաս,
Բազմած կը խորհիմ, նաեւ այս շաբաթ,
Լուրերուս բաժինն երբե՛ք ընել զանց,
Դրոշմս որ առաջ եր խիստ գերազանց,
Եւ հիմա ափսո՛ս, ինձի կուգայ քե՛,
Ճոխ յանգ զսնելու մասին աղիւս է,
Օրաքերքերէն լուր կ'առնեմ իսկոյն,
Թե հանդես մը կայ մե՛ծ, շրթերագոյն,
Պատրիարքական դահլիճին մեջ, ուր
Պի՛տէ՛ գան հաւաքուիլ հասակով չուշուր,
Մեր վարժարանաց ուսանողք արի,
Ի խընդիր մի քիչ անո՛ւս շաբաթի,
Եւ որոնք յետոյ ի փայլ հանդեսին,
Պիտի ընդարձակ ճառեր ալ խօսին:
Եւ զի չեմ ուզեր բողոք անգիտակ,
Ըզնեղ որ կարգաւ միշտ Հանրագիտակ,
Մեր հանդեսներէն՝ որոնք անխաբի,
Չեն անտուտ բընաւ կե՛ղծ եւ կամ պատի,
Քայլերս իմ կուզուիմ ոտով ճեպընթաց,
Դեպ ի Սիրէնի, ուր Հայ օրիորդաց,
Եւ ուսանողաց երամն անուշիկ
Ո՛հ, կառախումբին կ'սպասէ յուշիկ,
Ու կես ժամ յետոյ ամենեւ անվրդով,
Պատրիարքարան կրօնապետք փութով,
Ուր Ոսուցչական բազմաքիւ խումբեր,
Իրենց սաներով ժո՛ւռ գան անհամբեր:
Դահլիճն ու սրահն լեցուած են բոլոր,
Վարժուհիներով սիրուն, անմոլոր,
Որոնք Պալաթէն, Խասգիւղէն անա՛գ,
Հասած են արդէն կարծես երկնառաք,
Եւ միացած են անոնց որոնք անդ,
Իսկիւսարներէն դէմով հընաւանդ,
Եւ Սամաթիայէն, շրթեր արուարձան,
Հասած ու կանգուն են կարծես արձան:
Իսկ վարժապետաց մեջ բազմասեսակ,
Պիտէ՛ եւ որ յիշենք Տիար Սուրեան Միսաք,
Որ հանդեսը դեռ չսկսած վրո՛ւմ,
Կը հառե՛ր զուարթ բարձրացած իսկն,
Մինչ Տեսուչն արի Սպիւսքումբունին:
Կը համբեր քեյերն չըմանղ մօրուքին,
... Ամբոխը սակայն կ'ուռնանայ սակաւ,

Դահլիճը կ'ըլլայ անձուկ ու սակաւ,
Եւ այդ խուռներում մանկանց ժրխորէն,
Եւ կիւղ մը պատէ մեզ խիզախորէն,
Ձի դահլիճն որքան հաստատ եւ հսկայ,
Կրնայ ըլլալ որ մի քիչ ցաւ ըզգայ,
Եւ կրքի մեզ հետ առնելով իր տակ,
Այցելուներու երամն, անկասակ:
Այս կայսրեան մեջ անորոշ, տարած,
Ահա Այվազեան հեռենքին փարքում,
Որ Ս. Պատրիարք Հօր հրամանաւ,
Դահլիճ կը փութայ եւ խիստ օրագրաւ,
Կ'աւետէ քե՛ ո՛հ, որոշուած է որ,
Մայր-Եկեղեցւոյն մէջը փառաւոր,
Իջնեն մեր սանունք երկսեռ այցելու,
Դընացով մ'համեստ, պարկեշտ եւ հըրու,
Ուր տեղ ընդարձակ, հանգիստ, անվրդով,
Հանդեսը շրթեր սօնուի՛ ապահով:
Ու մանկունք իրենց սարօք միասին,
Կ'իջնեն Մայր-Տաճար ու մե՛ծ հանդեսին,
Սկիզբը կ'առնէ Տիար Ռեքեոս,
Պերպերեան որ միշտ հոն եւ կամ քե՛ հոս,
Կը խօսի ու իր ձայնովն ոլորուն,
Ի դիմաց բոլոր ուսանողներուն,
Շնորհաւորել կուգայ օրագին,
Չափի մեծ տօնը, Ս. Պատրիարքին:
Ու ճառերն ապա, ծայր կ'առնեն անդէն,
Բրիլիանտ, ծափե՛ր բարձրանան դէս, դէն,
Մինչ Եկեղեցւոյն զանգակն անագող,
Նոյն ժամուն մեռել մը կ'ողբայ զողորմ:
... Աղիւս քաղեցի մըն է խեղճ, անոք,
Ձոր պիտի քաղեն անապարանոք,
Ձի ֆահանայից ձայներն այս, փոխէն,
Հանդեսին ճառերն, ո՛հ, կը վրդովեն:

Վիշտ ու ցաւ ի սիրտ, աւա՛ղ, կը լսեմ
Թե Գումգաբուի Թաղական վրսեմ
Խոր սուգ առքելով ամբողջ աօխարհին
Իրենց պատշոնէն պիտի՛ հրաժարին
Ձի լրացուցած են իրենց շրջան
Դարձուներեամբ մ'ընկիր, ժաւջան:

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-Ի ԹԵՐԹՕՆԸ 13

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

Մ. Սէնթեզը դարմանքով կը դիտէր այս տարօրինակ դասախօսութիւնը : Վարժապետին խօսածը ընտանեկան տեսակցութիւն մըն էր տիեզերագրութեան վրայ և Մ. Սէնթեզը հագիւ կրնար ըմբռնել ուսուցիչին խօսքերը , ա'յնքան արագ կը խօսէր : Իր տկարացած միտքով տարտամօրէն հասկցաւ թէ խօսքը կը դառնար մեր արեգակնային դրութեան մոլորակներուն վրայ : Այդ պահուն կը խօսէր Հրատի վրայ , անոր բնակիչներուն , արտադրութեան , բնական վիճակներուն պատմութեան , արհեստական գիտութեան և դիդարուեստի մէջ իրենց առաջդիմութեան վրայ , այնքան մանրամասնութեամբ որ Մ. Սէնթեզը կարծեց թէ մեր աշխարհին վրայ կը խօսէին : Հասկցաւ թէ այս Ուղեղայինները կրցած էին երթալ 76 միլիոն փարսախ հեռու գտնուած այդ մեզի անծանօթ մոլորակը և յաջողած էին նոյն իսկ թափանցել անոր ներքին կեանքին :

Մեծ-ծերունի-պարոնը հասկնալով Եւրոպացի գիտնականին հետաքրքրութիւնը յայտնեց թէ զինքը ներկայ պիտի ընէ երկրիս և իր դրացի մոլորակին՝ Հրատի միջև տեղի ունեցած հազորդակցութեան :

— Հիմա պիտի ձեռնարկենք ատոր հարցուց Մ. Սէնթեզը տենդագին :

— Ոչ , աւելի նախապատիւ է գիշերը , դուն ինծի ձգէ այդ բաները , պատասխանեց մարդուկը թեթեւ մը ժպտելով :

Այս միջոցին դասը վերջացած էր : Դասախօսութիւնները շատ կարճ կը տեւէին քանի որ Ուղեղայինները լաւ առողջաբաններ , մտաւորական խճողանքէ կ'զգուշանային :

Վարժապետը կտրեց խօսքը և սա բառերը արտասանեց .

— Արթնցէ՛ք . . .

Եւ անմիջապէս ամփիթատրոնին ամէն

կողմէն ուրախ ճիչեր արձակուեցան և շարժումները սկսան Տեսարանը հիմնովին փոխուած էր : Պահ մը առաջ արձանի պէս անշարժ դպրոցականները , հիմա , դրասեղաններուն վրայ , դեքձանին կտրուած օդապարիկներու պէս կ'երթային կուղային , կիջնէին կեղւէին և մերթ կը կենային տեսելու ծպտելով զիրենք դիտող օտարականը և յետոյ ճնշուկներու պէս կը փախչէին դուռնէ մը : Ակնթարթի մը մէջ արահը պարպուած էր և հոն մնացած էին միայն դասատուն , Մ. Սէնթեզը , Մեծ-ծերունի-պարոնը և չորս ընկերները :

— Է , Նախածին , ի՞նչ կարծիք ունիք մեր ուսուցման եղանակին վրայ , որով աշակերտը չի յոգնիր և սակայն միշտ ուշադիր է և հմուտար խօսուածները , հարցուց Մեծ-ծերունի-պարոնը :

— Կարծեմ թէ գուշակեցի ձեր դրութիւնը . . .

— Ոչ , անկարելի է : Ինչ որ ալ ըլլայ ձեր քաղաքակրթութեան ատիճանը , չեմ կրնար հաւատալ որ ձեր ժամանակակիցները գիտցած ըլլան այն սկզբունքը որով կը դործենք :

— Շատ պարզ է , բացատրեմ , Մեծ-ծերունի-պարոն , քանի որ 19րդ դարուն վերջերը այդ գիտական սկզբունքին ծանօթ էինք : Երբ ձեր տղաքը դպրոց կուգան տեղերնին կը նստին , վարժապետը անոնց կըսէ « քնացէք » : Անոնք կը քնանան , վասն զի ողջովուց վարժուած են : Բնանալէ աւելի կ'իյնան տեսակ մը թմրութեան մէջ , ուր միտքը և մարմինը կախում ունին « քնացէք » ըսող մարդէն , այնպէս չէ :

— Այո , այո , պատասխանեց Մեծ-ծերունի-պարոնը չփոթած , շարունակեցէք . . .

— Երբ այսպէս քնանան , վարժապետը այն ատեն կը կարգայ , կամ կը խօսի մէկ

անգամ դասը : Ունենդիրները , արտաքին ու է ազդեցութենէ զերծ , զայն կը լսեն առանց բառ մը կորսնցնելու , և վարժապետը կը հրամայէ որ այս ամէն խօսուածները լաւ միտք պահեն և յիշեն երբ արթուն ըլլան : Այսպէս , անոնք ալ կը յիշեն բոլոր իրենց կեանքին մէջ : Այս հրաշալի կերպով պարզ դրութիւնը չխճողեր , չծանրաբեռներ պղտիկներուն միտքը , այլ քանի մը վայրկեանի մէջ շատ բաներ կը սորվեցնեն անջնջելի կերպով : Այս երեւոյթը ծանօթ էր մեզի և զայն կը կոչէինք « քնէութիւն » (իպնոթիզմ) կամ « թելադրանք » : Ես այս մասին խոր ուսումնասիրութիւններ կատարած էի , այնպէս որ յաջողած էի իմ կամքովս երեսուն տարի բնական քունին տեղ իմ իսկ կամքովս առաջ բերուած քնէութիւնը դնել :

— Բայց , Նախածին , այս գիւտը շատ նոր է , հազիւ 2000 տարուան բան մը , քանի որ մեր նախնեաց գիրքերը ու է յիշատակութիւն չեն ընել :

— Առաջին անգամ է որ ժողովուրդի մը ծանօթ գիւտ մը կամ սկզբունք մը կորսուի կամ մոռցուի դարեւոր ընթացքին և յետոյ երեւան ելլէ դարձեալ , իբր բոլորովին նոր հռչակուելով : Ինչ որ ալ ըլլայ սակայն , հրաշալի կերպով պարզաբանած էք ուսուցման դժուարին և տաժանելի գործը :

— Նախածին , այս միջոցը օակայն մէկ կողմն է միայն մեր դաստիարակութեան : Այս բանախօսութիւններէն դուրս ցուցադրումներ ալ կ'ընենք : Ամենաճոխ հաւաքածոներ ունինք առարկաներու և իրեղէններու , որոնց վրայ կը դասախօսուի : Եւ տղան պէտք է իր դասը տայ այս առարկաներուն վրայէն : Այս հաւաքածոները աւելի թանգարանի ճոխութիւն ունին և ցոյց դրուած են ժողովուրդին : Տեսէք : Եկէք այցելենք ամենահարուստ թանգարանը , Թոմպուքթուի թանգարանը , ուր արժէքաւոր բաներ և հրեւոթիւններ կան և զույցէ ձեռք ժամանակեն մնացորդներուն ալ պիտի հանդիպիք : Երթանք Նախապատմականներու յարկաբաժինը որ մօտ է , վարժարանին անդիի կողմը :

Քանի մը քայլով , Մ. Սէնթեզ ելաւ մէկ

կողմը 20 մետր երկայնութեամբ քառակուսի բակի մը մէջ , ուր բաց օդին մէջ շարուած էին զանազան առարկաներ , որոնց ինչ բանի գործածուելուն խելք չէր կրնար հասցնել : Յետոյ մտաւ շատ ընդարձակ սրահ մը որ ամբողջ յախճապակիէ շինուած էր և ապակիներով գոցուած : Մ. Սէնթեզ յանկարծ կեցաւ թեթեւ կերպով կոնաձև , ժանգոտելէ մաշած , մէջտեղէն կ'որ ծակով մը փորուած զանգուածի մը առջև :

— Իրա՛ւ որ թնդանօթ մըն է աս , սա այն մահասփիւռ գործիքներէն մին որ շուրջ 100 թօնօ կը կշռեն և 19րդ դարուն կը շինէին սպանութեան մեծ ձեռնարկուններու Հեռաքրքիր եմ հասկնալու թէ ուրկի՛ց կուգայ և ինչ բան կարծած են զայն իմ նոր բարեկամներս :

Ուղեղայինները լուռ կը մնային , մինչ Մ. Սէնթեզ արագ ակնարկներ կուղղէր աջ ու ձախ : Նշմարեց երկաթուղիի լաւ պահուած գիծեր , զրահաւորի մը ամբարտակը , որուն եզերքները մաշած էին , քանի մը գունդեր 36 արամագծնոց , վիթվորթի ամբրիկեան դրութեամբ 12 ի չափ ուռմբեր , պղինձէ ղեկ մը , երկաթէ անիւ մը և ուրիշ մնացորդներ անձև , անորոշ , որոնք խնամով շարուած էին : Մ. Սէնթեզ պիտի խօսէր , բացատրէր իր ընկերներուն այս գործիքներուն գործածութիւնը , երբ յանկարծ կեցաւ այս առարկաներուն իւրաքանչիւրին գլուխը գտնուած բացատրողական տախտակներուն առջև : Այս տախտակները հոյակապ փորագրութիւններ էին , որոնց քանդակումը որչափ որ պատիւ կը բերէր արուեստագետներուն , նոյնքան ալ զանոնք ներշնչողներուն : Այս տախտակները կոչում ունէին ներկայացնելու այս զէնքերը այնպէս ինչպէս որ կը գործածէին նախապատմական նախնիքը : Կոչում ունէին ճիշդ բառն էր , որովհետեւ անոնց այդ փորձը , նախկին վիճակին մէջ ներկայացնելու փորձը կատարելապէս անլուր և անճիշդ էր :

(Շարունակելի)

Արեօնասէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՅԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ.Ալի Գալսէտի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համան, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տուելունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմուլ յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց թէրթիկներու և տղայոց չիք և դիմացկուն ֆօքսիսներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից.


Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրէ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին.

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պուլիս, Պահճեհափու, ձեյալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԵՏԱՅԵՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Մ Ա Ր Ա Ր

Ֆոնոկրաֆի և Գրամոֆոնի Կրամօֆոնի
և Երկկողմ Բլազֆոնի, Կեդրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքի
Էֆենտի կից, Եալտըզ խանի տակ
քիւ 2: Մասնաձևի Պահճե Գաբու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանայ տու-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համար
ը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամօֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլազֆոն բերել տուած ենք, և կրնանք միջիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տուկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: